ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ

ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶ

ԿՐԱՍԱՐ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Ն10

<<05>> օգոստոսի 2016թ. ՀՀ Շիրակի մարզ գ. Կրասար

ՀՀ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶՊԵՏ ՊԱՐՈՆ՝

Հ. ՍԻՄՈՆՅԱՆ

Ձեզ ենք ներկայացնում Կրասար համայնքի 2016թվականի օգոստոսի 3-ի ավագանու որոշումները՝

Որոշում թիվ 12 առդիր՝ 1թերթից:

Կրասար համայնքի ղեկավար՝ /Խ. Մելիքյան /

ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶՊԵՏԱՐԱՆ
ԸՆԴՀԱՆՈՒՐ ԲԱԺԻՆ
Մուտք թիվ 8042-16
05 08 2016

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՈՒՆ
ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶ Ի ԿՐԱՍԱՐԻ
ԳՅՈՒՂԱԿԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ
ՈՐՈՇՈՒՄ ԹԻՎ 12

<< 03>> օգոստոսի 2016 թվական գյուղ Կրասար

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԿՐԱՍԱՐԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՄԱՐՎՈՂ, 1968 ԹՎԱԿԱՆԻ ԿԱՌՈՒՑՎԱԾ, ԵՐԿՐԱՇԱՐԺԻ ՀԵՏԵՎԱՆՔՈՎ 3-ՐԴ ԱՍՏՃԱՆԻ ՎԹԱՐԱՅԻՆ, ՏԵԽՆԻԿԱԿԱՆ ՎԻՃԱԿԸ ԱՆԲԱՎԱՐԱՐ ՆԱԽԿԻՆ ԱԿՈՒՄԲԻ ԿԻՍԱՔԱՆԴ ՇԻՆՈՒԹՅԱՆ ԱՊԱՄՈՆՏԱԺՄԱՆ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 16-րդ հոդվածի 2-րդ մասի դրույթով, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության արտակարգ իրավիճակների նախարարության «Սեյսմիկ պաշտպանության հյուսիսային ծառայության» պետական ոչ առևտրային կազմակերպության տնօրենի կողմից հաստատված 2016 թվականի հուլիսի 27-ի եզրակացությունը և «Պ.Ա.Գ. Էսթեյթ» սահմանափակ պատասխանատվության ընկերության կողմից կազմված 2016 թվականի հուլիսի 29-ի թիվ 030 հաշվետվությունը

ԱՎԱԳԱՆԻՆ ՈՐՈՇՈՒՄ Է

1. Տալ համաձայնություն Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Կրասարի համայնքի սեփականություն համարվող 1968 թվականի կառուցված, երկրաշարժի հետևանքով 3-րդ աստիճանի վթարային, տեխնիկական վիճակը անբավարար նախկին ակումբի կիսաքանդ շինությունն ապամոնտաժելու:

2. Հաշվի առնելով, որ կիսաքանդ ակումբի շինության ապամոնտաժման արդյունքում երկրորդային շուկայում հետագա օգտագործման համար պիտանի շինանյութերի ընդհանուր շուկայական արժեքը կազմում է 230000 դրամ, իսկ ապամոնտաժման ընդհանուր շուկայական արժեքը՝ 295000 դրամ, ինչը հնարավորություն չի տալիս ապամոնտաժելու կիսաքանդ ակումբի շինությունը, իսկ համայնքի բյուջեի սուղ միջոցներով հնարավոր չէ նշված աշխատանքները ամբողջությամբ իրականացնելու, ապամոնտաժման աշխատանքները իրականացնել համայնքի բնակիչ Գագիկ Պապիկյանը միջոցներով:

Ավագանու անդամներ՝

Կողմ՝(4) Դեմ՝(0) Ձեռնպահ՝(0)

Տիգրան Հովհաննիսյան _____

Գուրգեն Կարապետյան _____

Անահիտ Խոջոյան _____

Անահիտ Մելիքյան _____

Կրասարի համայնքի ղեկավար՝ Խ. Մելիքյան

3 օգոստոսի 2016թվական

գյուղ Կրասար